



ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԳՐԱՐԱՅԻՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

Հաստատված է ՀԱԱՀ գիտական խորհրդի կողմից “03” 06. 2016 թ. (արձ. № 10)	Վավերացնում եմ ՀԱԱՀ ռեկտոր _____ Ա. Թաթևերյան “03” 06. 2016թ.
--	--

ՀԱԱՀ
ԿՐԹԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ
ԿԱՐԳ

1. Նշանակությունը և կիրառման ոլորտը

- 1.1. Սույն ընթացակարգի նշանակությունն է համալսարանում իրականացվող կրթական գործընթացների գնահատման կարգի հաստատումը:
- 1.2. Ընթացակարգը կիրառվում է համալսարանի բոլոր կառուցվածքային ստորաբաժանումների գործունեության գնահատման համար:
- 1.3. Ընթացակարգում նշված պահանջները վերաբերում են գործընթացը իրականացնող ստորաբաժանումների, աշխատանքային խմբերի կողմից կիրառման համար:

2. Նորմատիվային փաստաթղթեր

- ՀԱԱՀ կանոնադրություն
- ՀԱԱՀ մշտադիտարկման մեթոդաբանություն
- ՀԱԱՀ կրթական գործունեության մշտադիտարկման կարգ
- Կրթական ծրագրերի որակի գնահատման ընթացակարգ (ՀԱԱՀ)
- Ներքին աուդիտի ընթացակարգ (ՀԱԱՀ)

3. Ընդհանուր դրույթներ

- 3.1. Համալսարանի կրթական գործունեության գնահատումը ենթադրում է իրականացվող գործողությունների առանձնացումը, գնահատման գործընթացի պլանավորումը և իրականացումը:
- 3.2. Կրթական գործունեության գնահատման համար համալսարանը մշակում է գնահատման մեխանիզմներ:
- 3.3. Յուրաքանչյուր կրթական գործընթացի գնահատման համար մշակված մեխանիզմին համապատասխան ստեղծվում են գործիքներ:
- 3.4. Համալսարանի կրթական գործընթացների գնահատումը ենթադրում է հետևյալ փուլերի իրականացումը՝
 - Համալսարանի կրթական գործընթացի(ների) մշտադիտարկում:
 - Մշտադիտարկման միջոցով հավաքագրված տեղեկատվության վերլուծություն և գնահատում:
 - Ստացված արդյունքների հիման վրա հաշվետվության պատրաստում և ներկայացում համալսարանի ռեկտորատ կամ գիտական խորհուրդ քննարկման:
 - Բարելավմանը ուղղված պլանների մշակում:

4. Գնահատման գործընթացի նպատակը և իրականացվող միջոցառումները

- 4.1. Գնահատման գործընթացի հիմնական նպատակն է կրթական գործունեության ներկա վիճակի վերաբերյալ օբյեկտիվ և հավաստի տեղեկատվության ստացումը, վերլուծությունը և գնահատումը, որը հիմք է հանդիսանում կրթական գործունեությանը ուղղված բարելավման պլանների մշակմանը և ուղղիչ գործողությունների իրականացմանը:
- 4.2. Սույն ընթացակարգը նախատեսում է միջոցառումներ ուղղված պրոֆեսորադասախոսական, վարչական և ուսումնաօժանդակ կազմի գործունեության որակի ապա-

հովմանը, կրթական ծառայությունների որակի ապահովմանը, ներառյալ ուսանողների գնահատումը:

4.3. Որպես չափման և վերլուծության եղանակներ օգտագործվում են՝

- Համադրման եղանակը (պլան-փաստ եղանակը),
- Սոցիոլոգիական մեթոդների կիրառումը (շահակիցների անկետավորում),
- Գործընթացի վիճակագրական գնահատում (ստուգիչ թերթիկներ գործընթացի կայունության գնահատման համար),
- Գործընթացի արդյունավետության ստուգման հարցաշարեր կամ այլ գործիքներ:

4.4. Գնահատման/չափման ձևը, պարբերականությունը, ինչպես նաև գնահատումն իրականացնող պատասխանատուներին սահմանում և նշանակում է տվյալ գործընթացի գնահատման համար պատասխանատուն:

4.5. Կրթական գործունեության գնահատման համար իրականացվում է կրթական գործընթացների մշտադիտարկում: Մշտադիտարկումը իրականացվում է հետևյալ միջոցառումների իրականացման համար՝

- Ուսումնական պարապմունքների գրաֆիկների իրականացման ստուգում,
- Ուսումնառողների կողմից ուսումնական նյութի յուրացման որակի ստուգում,
- Ուսումնամեթոդական նյութերի առկայության և որակի ստուգում,
- Ուսումնական գործընթացի ուսումնամեթոդական նյութերով և միջոցներով ապահովվածության ստուգում,
- Պրոֆեսորադասախոսական կազմի կոմպետենտության մակարդակի ստուգում և գնահատում,
- Ուսումնական գործընթացը ապահովող ծառայությունների աշխատանքի որակի վերահսկում և գնահատում,
- Ուսումնական գործընթացում ուսումնառողների, պրոֆեսորադասախոսական կազմի կողմից ներկայացված բողոքների ու առաջարկների գրանցում և վերլուծություն,
- Համալսարանի շահակիցների կարիքների և պահանջների ուսումնասիրում և գնահատում,
- Համալսարանի որակի կառավարման համակարգի վերաբերյալ տեղեկատվության հավաքագրում և վերլուծություն:

4.6. Կրթական գործունեության կամ առանձին կրթական գործընթացների արդյունավետության գնահատումն իրականացվում է նրանց վրա դրվող պահանջների համապատասխանության ստուգման համար, ինչպես նաև անհրաժեշտության դեպքում կանխարգելիչ/ուղղիչ գործողությունների իրականացման համար:

4.7. Վերլուծության արդյունքները օգտագործվում են՝

- Համալսարանի շահակիցների բավարարվածության մակարդակը գնահատելու համար,
- որակի կառավարման համակարգի գործառնման արդյունավետության գնահատման համար,

- համալսարանի ղեկավար կազմի կողմից կառավարչական որոշումների կայացման համար,
- ուղղիչ գործողությունների կամ բարելավմանը ուղղված ծրագրերի պլանավորման համար:

5. Ընթացակարգի նկարագրություն

- 5.1. Համալսարանի գործունեության գնահատման նպատակով պարբերաբար իրականացվում է համալսարանի ներքին և արտաքին շահակիցների անկետավորում և նրանց կարիքների և պահանջների գնահատում:
- 5.2. Անկետավորումը անցկացվում է համալսարանի շահակիցների համալսարանի ծառայություններից, կրթական գործընթացից, կրթական ծրագրերի որակից բավարարվածության մակարդակը հաստատելու նպատակով:
- 5.3. Անկետավորումը իրականացվում է համալսարանի կողմից հաստատված “Մշտադիտարկման մեթոդաբանության” հիման վրա:
- 5.4. Շահակիցների կարիքների գնահատման համար որպես գործիք կիրառվում են անկետաներ (յուրաքանչյուր շահակից կողմի կարիքի բացահայտման համար) (գործիքները ներառված են Շահակիցների գնահատման կարգում):
- 5.5. Համալսարանի ստորաբաժանումների գործունեության գնահատման համար պարբերաբար իրականացվում են ներքին աուդիտներ (Ներքին աուդիտի ընթացակարգ):
- 5.6. Համալսարանի ուսումնամեթոդական կենտրոնը պարբերաբար իրականացնում է կրթական գործունեության գնահատում շահակիցների անկետավորման և գնահատման տարբեր գործիքների կիրառմամբ (գնահատման հարցաթերթեր, SWOT վերլուծության մատրիցա և այլն):

6. Կրթական գործունեության գնահատման մեխանիզմներ

- Համալսարանի կառուցվածքային ստորաբաժանումների գործունեության գնահատում ներքին ուղիտների միջոցով՝ նախապես մշակված չափորոշիչների և կարգերի համաձայն:
- Համալսարանի գործունեության մշտադիտարկում նախանշված մշտադիտարկման ցուցանիշների և մշտադիտարկվող աղբյուրների հիման վրա, արդյունքների վերլուծություն և գնահատում:
- Համալսարանի գործունեության գնահատում շահակիցների անկետավորման միջոցով:
- Ուսանողների ընթացիկ առաջադիմության գնահատում մշակված չափորոշիչների հիման վրա:
- Ուսանողների ամփոփիչ ատեստավորում գնահատման չափորոշիչների և մեթոդների հիման վրա:
- Համալսարանի գործունեության արտաքին գնահատում արտաքին փորձագետների միջոցով:
- Ինստիտուցիոնալ հավատարմագրում:

7. Պատասխանատվություն և իրավասություն

Համալսարանի գործունեության գնահատման համար իրավասու կառուցվածքային ստորաբաժանումներ և աշխատանքային խմբեր

Գործողություն	Պատասխանատու կառուցվածքային ստորաբաժանում կամ աշխատանքային խումբ
Համալսարանի շահակիցների բավարարվածության մակարդակի գնահատում կրթական գործունեության որակից	ՀԱԱՀ Ուսումնամեթոդական կենտրոնի կրթական բարեփոխումների, ռազմավարական պլանավորման և նորագույն տեխնոլոգիաների բաժին ՀԱԱՀ Աշխատանքի տեղավորման և խորհրդատվության բաժին
Համալսարանի ներքին աուդիտների իրականացում	ՀԱԱՀ Կրթության որակի վերահսկման հանձնաժողովներ/աշխատանքային խմբեր
Համալսարանի գործունեության վիճակագրական վերլուծություն և գնահատում	ՀԱԱՀ Ուսումնամեթոդական կենտրոնի Ուսումնական գործընթացի վերահսկման, ինքնավերլուծության և որակի կառավարման բաժին
Դասավանդման գործընթացի գնահատում	ՀԱԱՀ Կրթության որակի վերահսկման հանձնաժողովներ/Ֆակուլտետային աշխատանքային խմբեր
Արտաքին աուդիտներ	Կրթության ոլորտի արտաքին փորձագետներ/ արտաքին մասնագիտական խմբեր
Ինստիտուցիոնալ հավատարմագրում	Կրթության ոլորտի արտաքին փորձագետներ